Արձանագրություն N 1

2023 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ դպրոց) աշակերտական խորհրդի և դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ Գ. Ղարիբյանի հանդիպումը:

Հանդիպման ժամանակ հավակնորդը լսեց դպրոցի զարգացման ծրագրի վերաբերյալ աշակերտական խորհրդի առաջարկությունները՝

1. դպրոցի կապիտալ վերանորոգում (պատուհաններ, սանհանգույցներ, հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ, գրադարան, դասասենյակներ և այլն)
2. այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն՝ համատեղ վիկտորինաներ, քննարկումներ, մրցույթներ
3. «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ստեղծում
4. դասերի ժամանակ խաղային մեթոդների կիրառում
5. առաջարկությունների և դժգոհությունների արկղիկի ստեղծում
6. համագործակցում «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հետ:

Տնօրենի պաշտոնակատար _____ */Ռ. Հասասյան/*

Նախագահ՝ _____ */Ս. Ասատրյան/*

Քարտուղար՝ _____ */Մ. Չիչոյան/*

Արձանագրություն N 2

2023 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ դպրոց) մանկավարժական խորհրդի և դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ Գ. Ղարիբյանի հանդիպումը:

Հանդիպման ժամանակ հավակնորդը լսեց դպրոցի զարգացման ծրագրի վերաբերյալ մանկավարժական խորհրդի առաջարկությունները՝

1. դպրոցի կապիտալ վերանորոգում (պատուհաններ, սանհանգույցներ, հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ, գրադարան, դասասենյակներ և այլն)
2. ջեռուցման համակարգի նորոգում
3. առարկայական կաբինետների ստեղծում
4. բնագիտական առարկաների լաբորատոր սարքերի, նյութերի ձեռքբերում
5. համակարգիչների ձեռքբերում
6. էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում
7. աշակերտական սեղանների և աթոռների ձեռքբերում
8. շրջանավարտների խորհրդի ձևավորում
9. հանդիպումներ դասագրքերի հեղինակների հետ
10. «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա» առարկաների լաբորատորիաները համալրել սարքերով և նյութերով (քարշիչ պահարան, արծաթի նիտրատ ($AgNO_3$), աղաթթու (HCl), ալկալիական մետաղներից՝ Na, ֆիլտրի թուղթ, հոսանքի աղբյուր, մետաղե ճոռ, լաբորատոր լծակ, 102 գ զանգվածով բեռների հավաքածու, կալորաչափ, մագնիսական սլակ, լծակավոր կշռաքարեր, ականջի կառուցվածքի մոդել, մարդու ներքին օրգանները՝ որովայնի և կրծքավանդակի խոռոչում տեղակայված, մարդու կմախքը, բջջի կառուցվածքը (լայնակի կտրվածք, հերբարիումներ, պլակատներ, սարքավորումներ և այլն):

Տնօրենի պաշտոնակատար _____ /*Ռ. Հասասյան*/

Քարտուղար _____ /*Ե. Մալխասյան*/

Արձանագրություն N 3

2023 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ դպրոց) ծնողական խորհրդի և դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ Գ. Ղարիբյանի հանդիպումը:

Հանդիպման ժամանակ հավակնորդը լսեց դպրոցի զարգացման ծրագրի վերաբերյալ ծնողական խորհրդի առաջարկությունները՝

1. դաստիարակել մարդասիրություն և հայրենասիրություն
2.աշխատանքներ տանել սովորողների բարեվարքության կանոնների ապահովման ուղղությամբ:

Տնօրենի պաշտոնակատար՝ _____ */Ռ. Հասասյան/*

Խորհրդի նախագահ՝ _____ */Մ. Տուդոյան/*

Քարտուղար՝ _____ */Գ. Արզաքանցյան/*